

Խնձորենու այրացող



Տարածված է հանրապետության բոլոր մարզերում: Վարակվում են տերևները, շիվերը, ծաղիկները, երբեմն նաև պտուղները: Երիտասարդ, նոր դուրս եկած տերևները պատվում են մոխրասպիտակավուն արանման փառով, հետագայում փառը ստանում է գորշավուն երանգ: Վարակված տերևները չեն զարգանում, թերվում են գլխավոր ջրի ուղղությամբ, ստանում նավակի տեսք: Ուժեղ վարակի դեպքում տերևների մեծ մասը չորանում են, կարծես այրված լինեն և թափվում են: Վարակված շիվերը ևս պատվում են սպիտակավուն կամ կեղտանոխրագույն փառով, աճը կանգ է առնում, հաճախ չորանում են: Վարակված ծաղիկները չորանում են: Պտուղները հազվադեպ են վարակվում: Հիվանդության հարուցիչ սունկը ձմեռում է վարակված բողբոջներում: Գարնանը, տերևային և պտղային վարդակները կարող են վարակվել նաև միջին ծաղիկը: Արևոցող վարակում է հիմնականում մեծահասակ ծառերը, սակայն կարող են

վարակվել բոլոր տարիքի ծառերը: Հիվանդության զարգացմանը նպաստում է չոր, տաք եղանակը /հատկապես ամռան սառչին կեսին/, ինչպես նաև ջրի պակասը:

Պայքարի միջոցառումները

Գ ի ր ա ռ է յ ճ ի շ տ ա գ ր ա տ է խ ն ի կ ա , կարգավորել առգումը, կտրել ու հեռացնել վ ա ր ա կ վ ա ծ շ Վ Ե ր Ը : Ք ի մ ի Կ ա կ ա պատրաստուկներից առավել արդյունավետ են տապալը (0,4 լ/հա, 4 մլ 10լ ջրին), բայլետոնը (0,8 կգ/հա, 8 գր 10լ ջրին), տասպան (0,3 լ/հա, 3մլ 10լ ջրին), իմպակոլը (1,0 լ/հա, 10 մլ 10լ ջրին):



Խնձորենու և տանձենու քու



Խնձորենու (*Venturia inaequalis*. Wint.) և տանձենու (*Venturia pirina* Aderh.) քուերի վնասակարությունն արտահայտվում է ոչ միայն բերքի նվազումով, այլև բերքի որակի գրավի վատացմամբ: Տանձենու և խնձորենու քուերի հարուցիչները նեղ մասնագիտացված են: Քուսով վարակվում են տերևները, պտուղները, շիվերը /հատկապես տանձենու/, տերևալոթուները, պտղակոթուները, բաժակաթերթերը: Տերևների վրա վարակն արտահայտվում է բծերի ձևով, որոնք սկզբում թույլ են արտահայտվում, թեթև դեղնավուն, մի տեսակ յուղային, ապա կանաչադեղնավուն, հետագայում՝ թավշանման սև բծերի ձևով, որն ուղեկցվում է սպորակրությամբ: Բծերը խնձորենու մոտ հիմնականում տերևի վերին մակերեսին են, իսկ տանձենու մոտ՝ հակառակ երեսին: Եթե վարակվում են գարնանը կամ ամռան սառչին կեսին, բծերը սովորաբար լինում են խոշոր՝ 8-10սմ տրամագծով և ավելի մեծ, իսկ ուշ վարակի դեպքում՝ 2-3սմ: Ուժեղ վարակված տերևները կարող են ժամանակից շուտ թափվել: Պտուղների

վրա բծերը կլորավուն են, համարյա սև, խիտա ընդգծված, հաճախ բաց երիզով: Վաղ վարակի դեպքում պտուղները աճնանում են, վարակված մասում առաջանում են ճաքեր. սա հատուկ է հատկապես տանձի պտուղներին: Տերևալոթերի և պտղակոթերի վարակն առաջացնում է վաղաժամ տերևաթափ, չորացում:

Պայքարի միջոցառումները

Գ ի ր ա ղ Վ ու մ են համալիր միջոցառումներ, որոնք ընդգրկում են ինչպես քիմիական, այնպես էլ ա գ ր ա տ է խ ն ի կ ա կ ա ն մ ի ջ ջ ո ջ ա ռ ու մ ն է ր :

Ազդուեխիմիկական միջոցառումներից արդյունավետ է վարակված շիվերի, տերևների հեռացումն այգուց, ճիշտ պարարտացումը ֆոսֆորային և կալիումական պարարտանյութերով, ճիշտ է ու ձևավորումը: Ուժեղ վարակված այգիներում արդյունավետ են բողբոջան հեղուկով կամ դրա փոխարինիչներով սրսկումները: Առաջարկվում է հետևյալ սխեման՝ ուժեղ վարակված այգիներն աշնանը, տերևաթափից հետո, սրսկել բողբոջան հեղուկի 3%-անոց կալիումով, իսկ վաղ գարնանը՝ բողբոջների ուղչման փուլում, խորուսով 0,2 լ/հա (10լ ջրին 2մլ): Հաջորդ սրսկումը կատարվում է վարդագույն կոնի փուլում, սկզբով 0,2 լ/հա (10լ ջրին 2մլ), մյուսը՝ ծաղկաթերթերի թափվելուց անմիջապես հետո սկզբով 0,2 լ/հա (10լ ջրին՝ 2մլ), դրանից 14-16 օր հետո՝ հետևյալ պատրաստուկներից մեկով՝ տասպա 0,3 լ/հա (10լ ջրին 3մլ), գատո 0,14 կգ/հա (10լ ջրին 1,4գր) նաաիվը 0,5 կգ/հա(10լ ջրին 5գր):



Պտղատուների բակտերիալ այրվածք

Հ ի վ ա ն դ ու թ յ ու ն ն արտահայտվում է շիվերի, ծաղիկների և պտուղների վրա: Ն ա ր բ ա ց վ ա ծ ծաղիկներն ու երիտասարդ շ Վ Ե ր Ը հ ա ն կ ա ր ծ ա կ ի թառամում են և գորշանում, տ ե ր ն է ր Ը ն ու չ ն պ է ս ս ն ա ն ու մ են, ու լ ը ր վ ու մ, ս ա կ ա յ ն չ է ն թ ա փ վ ու մ : Վ ա ր ա կ վ ա ծ խ ա կ պ տ ու ղ ն է ր Ը մ ի տ է ս ա կ կ ն ճ ճ ո տ վ ու մ են, ս ն ա ն ու մ և մ ն ու մ ծ ա թ ի վ ր ա : Հ ի վ ա ն դ ու թ յ ա ն արտահայտման ձևը շատ նման է կրակով այրվածի: Վարակված ճյուղերի կեղևը հ ա ճ ա խ ծ ա ծ կ վ ու մ է բշտիկներով և ճաքճում:



Չորացած հիվանդ կեղևը բարակում է: Հիվանդ ու առողջ հյուսվածքների սահմանը լավ նկատելի է: Սկզբում վերևի ճյուղերից՝ հիվանդությունը կեղևով և լուբով տարածվում է դեպի ներքև /չի թափանցում անոթները/: Հիվանդությունը կարող է ընդգրկել ամբողջ ծառն ու առաջացնել դրա չորացում: Հիվանդությունն առավել հաճախակի փոխանցվում է նոր ճյուղերի և ծառերի վրա անձրևի միջոցով: Ընկնելով բույսի վրա՝ բակտերիան բույսի մեջ է թափանցում վերքերի, վնասվածքների, ճեղքերի և նույնիսկ հերձանցքերի միջոցով: Հիվանդության տարածման գործում մեծ է միջատների դերը (լվիճներ, կեղևակերեր, հատկապես՝ մեղուներ): Վարակը կարող է փոխանցվել նաև պատվախտման ժամանակ:

Պայքարի միջոցառումները

Խստիվ պահպանել կարանտինային միջոցառումները: Հիվանդության հայտնաբերման, նույնիսկ կասկածի դեպքում հանել և ոչնչացնել վնասված ծառերը կամ ճյուղերը: Կտրոններ, պատվաստացուներ վերցնել միայն առողջ ծառերից: Վաղ գարնանը կատարել ծառերի սանիտարական հատումները:



Առողջ և վարակված ծառերի էռի աշխատանքները պետք է կատարեն տարբեր մարզիկ՝ առանձնացված գործիքներով: Ա յ զ ի ն պ ա ր ա ր ա տ ա ց ն է լ ֆ ո ս ֆ ո ր ա կ ա ն պարարտանյութերով: Ծաղկումից առաջ և ծաղկաթափից հետո ծառերը սրսկել պղնձի պարունակող որևէ պատրաստուկով (պղնձի օքսիդիդի 4կգ/հա, (10լ ջրին 40գրամ) կամ բողբոջան հեղուկի 1%-ոց լուծույթով (10լ ջրին 100գր պղնձաբջապա և 100 գր չիանգած կիր) կամ ֆունգուրանով 3 կգ/հա (10լ ջրին 30գրամ) ծախսի նորմայով:

Ցիտոսպորոզ



Մեկի հարուցիչը ներթափանցում է բույսի մեջ մեխանիկական վնասվածքների միջոցով: Կեղևից անցնում է կամբիումի և բնափայտի մեջ, որի արդյունքում ամբողջ ճյուղը չորանում է: Ուժեղ վարակի դեպքում բույսերը վաղաժամ չորանում են:

Ճյուղերի չորացումը և մահանալը սովորաբար նկատվում են գարնանը կամ ամռան սառչին կեսին: Եթե ծառերի մահանալը սկսվում է միջին տերևային բողբոջների առաջանալը, ապա նկատվում է բողբոջների գորշացում և ոլորում, որոնք չորանում և երկար ժամանակ մնում են ծառի մահացած ճյուղերի վրա: Եթե չորացումը նկատվում է տերևաբողբոջների բացվելուց հետո, առաջանում են մանր, կլորավուն, մի տեսակ նվագ տերևներ: Չոր, տաք եղանակի հաստատվելուց հետո (մայիսի վերջը, հունիսի սկիզբը), այդպիսի տերևները 3-4 օրում թառամում, չորանում են, սակայն չեն կորցնում իրենց կանաչ գունավորումը և երկար ժամանակ մնում են ծառի վրա: Ճյուղերի կամ ծառի այդպիսի արագ չորացումն ու մահը պայմանավորված են բնի ենկրոզով, ջրատար անոթների խցանմամբ: Եթե ենկրոզը բնի մի մասով մի կորում է, ապա չորացումը կարող է ձգգվել 3-5 տարով:

Ցիտոսպորոզին բնորոշ ախտանիշները, շտամբի և կմախքային ճյուղերի վրա, խոշոր երկարավուն խեժ արտադրող վերքերն են: Վարակմանը նպաստում են նաև մոնիլյոզը, ծակոտակն էր ր թ ա վ ը ր Ը Թ Ե ր Ը , վնասվածքները, արևի և ցրտահարության առաջացրած վերքերը և այլն:

Պայքարի միջոցառումները

Կարևորվում են նախագրուշական միջոցառումները, որոնք ուղղված են ծառի դիմացկունությունը բարձրացնելուն, տվյալ տարածաշրջանին համապատասխան սարտերի ճիշտ ընտրությունը: Մտառելի պաշտպանումն արևահարումից և ցրտահարումից, մոնիլյոզից, վնասվածքներից: Այս կամ այն պատճառով առաջացած վերքերը ժամանակին բուժել այգու քսուկով, բոլոր չորացած ճյուղերը մինչև աշուն հեռացնել այգուց և այլն: Աշնանը կամ գարնանը կատարել սրսկում բողբոջան հեղուկի 3% -անոց լուծույթով: Ծաղկումից հետո սրսկել 1%-ոց բողբոջան հեղուկ կամ կուրգատ 2,5 կգ/հա (10լ ջրին 25 գ) կամ կուպրոքսատ 5 լ/հա (10լ ջրին 50 գ) կամ ֆունգուրան 3 կգ/հա (10լ ջրին 30 գ) կամ կուպրոֆոն 3 լ/հա (10լ ջրին 30 մլ): Կատարել ճիշտ պարարտացում ազոտական, կ ա լ ի ու մ ա կ ա ն և ֆ ո ս ֆ ո ր ա կ ա ն պարարտանյութերով: Գարնանը ծառի բերեն անպայման սպիտակեցնել կրակաթի 20%-անոց լուծույթով, ավելացնել նաև 1 բառի չափ թարմ գոմաղը կամ կալվածող:



Մոնիլիոզ (մոնիլյալ այրվածք, մոխրագույն պտղափտում)



Հիվանդության զարգացմանը նպաստում է գարնանը, ծաղկման ժամանակ, սառը, խոնավ, հատկապես մտառվապատ եղանակը:


Մոնիլյոզով վարակվում են ծաղիկները, շվերը, տերևները, պտուղները:

Շատ արտահայտման բնույթի, տարածված են երկու հիմնական ձև՝ մոնիլյալ այրվածք և մոխրագույն պտղափտում: Մոնիլյալ այրվածքը հիվանդության գարնանային ձևն է, արտահայտվում է ծաղիկների հանկարծակի գորշացմամբ ու չորացմամբ, որին հաջորդում է տերևների, միայնա շվերի, երիտասարդ պտղաշվերի թառամումն ու չորացումը: Հիվանդության արտահայտման

ձևը շատ նման է ցրտահարվածի, այրվածի, այստեղից էլ առաջացել է անվանումը:

Հիվանդության արտահայտման երկրորդ ձևը մոխրագույն պտղափտումն է, ինչն սկսվում է պտղի վրա ոչ մեծ, մուգ բծի ձևով, որն արագ մեծանալով, ընդգրկում է ամբողջ պտուղը՝ մակերեսին առաջացնելով բազմաթիվ մանր, ցրված կամ իրար միացած մոխրագույն բծեր:

Պտուղների վարակվածության գործում մեծ նշանակություն ունի պտղի մեխանիկական վնասվածությունը, այս առումով էլ պտղափտումն ավելի մեծ վնաս է պատճառում այն այգիներում, որտեղ տարածված են կազարկան, պտղակերները և այլ վնասատուներ: Հաճախ վարակը տարածվում է առողջ և հիվանդ պտուղների շփման միջոցով: Կարկտահարությունը ևս մեծացնում է հիվանդության տարածման հնարավորությունն ու հավանականությունը:



Պայքարի միջոցառումները



Անհրաժեշտ է վերացնել վարակի աղբյուրները, հավաքել, այգուց հանել և ոչնչացնել հիվանդ, մումիֆիկացած պտուղները, ծաղկումից մտա սնկ ամիս անց կտրել ու այգուց հեռացնել այրել վարակված բնձյուղները: Ա շ ն ա ն ր , տերևաթափի ժամանակ կամ գարնանը, միջին բողբոջների ուռչելը, սրսկել բողբոջան հեղուկի 3% -ոց լուծույթով կամ հետևյալ պատրաստուկներից որևէ մեկով. պղնձի օքսիդիդի 4 կգ/հա (10լ ջրին 40 գ), կուպրոքսատ 5 լ/հա (10լ ջրին 50 գ), կուպրոֆոն 3 լ/հա (10լ ջրին 30 մլ): Պտղափտման դեմ արդյունավետ են նաև վեգետացիայի ընթացքում տուպազի 0,4 լ/հա (10լ ջրին 4 մլ) և սկորբի 0,2 լ/հա (10լ ջրին 2 մլ) լուծույթներով սրսկումները:

Մև քաղցկել

Խիտ վնասվողի հիվանդություն է: Վնասում է բույսի և վեգետատիվ և գեներատիվ օրգանները՝ ցորունը, ճյուղերը, տերևները, ծաղիկները և պտուղները: Ամենից շատ վնասվում են կմախքային ճյուղերը, ցորունի վրա սկզբում առաջ են գալիս մուգ մանուշակագույն խցան հիշեցնող բշտիկներ, որոնք հետագայում խորանում, ճաքճում և սնանում են: Հիվանդ ծառերի տերևները դեղնում են, չորանում ու թափվում են: Պտուղների վրա հիվանդությունը սկզբնական շրջանում արտահայտվում է մուգ կամ սև բծերի տեսքով, հետագայում պտուղները կնճռոտվում են, սնանում և ծածկվում են շատ մանր բշտիկներով: Ավելի ուշ վնասված հատվածներում առաջանում են քաղցկելային խոցեր: Վնասված հատվածները կամ ամբողջ ծառը չորանում են:



Պայքարի միջոցառումները

Այգու մ կիրառել ճիշտ ազդուեխիմիկա: Հեռացնել թափված տերևները, պտուղները, ինչպես նաև վարակված ճյուղերը և այլն: Կատարել բերքի սպիտակեցում և կորված ճյուղերի մածիկապատում: Աշնանը կամ վաղ գարնանը կատարել ծառերի սրսկումները 3% բողբոջան հեղուկով: Վեգետացիայի ընթացքում արսկել կուպրոքսատ 6 լ/հա (10լ ջրին 60 մլ), ֆունգուրան 3 կգ/հա (10լ ջրին 30գր) կամ պղնձի օքսիդիդի՝ 4կգ/հա (10լ ջրին 40գր) պատրաստուկներից որևէ մեկով:

